*«Նոր ժամանակի կրթություն»*

*ՀԿ*

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարինե Վիրաբյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Հ. Իսակովի անվան հ.132 հիմն. դպրոց

Երևան 2022

## Բովանդակություն

Ներածություն……3

Արժեք և արժեհամակարգ……..4

Հայրենիք և հայրենասիրություն……..….5

Էպոսը՝ որպես ազգային արժեհամակարգի ձևավորման միջոց……..……..6

Ուսուցման մեթոդներ…….....……..10

Եզրակացություն……12

Գրականության ցանկ……13

## Ներածություն

Հայրենասիրության դաստիարակությունը և արժեհամակարգի ձևավորումը մանկավարժության հիմնախնդիրներից են:

Մեր օրերում՝ գիտական հայտնագործությունների, տեխնիկայի զարգացման ու խելահեղ առաջընթացի ժամանակաշրջանում, պատերազմների, բնական աղետների ու արհավիրքների հետևանքով ստեղծված սոցիալ-տնտեսական, քաղաքական ճգնաժամերի պատճառով այնպիսի հիմնահարցեր են ծառացել պետության, մասնավորապես հանրակրթության առջև, ինչպիսիք են՝

1. ազգային արժեքների, մշակույթի, հայրենասիրական գաղափարների նկատմամբ անտարբերություն
2. քաղաքացիական դիրքորոշման պակաս

**Թեմայի արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ հայրենասիրության դաստիարակությունը և արժեհամակագի ձևավորումը նպատակաուղղված է ոչ միայն սովորողի, այլև յուրաքանչյուր քաղաքացու կայացմանն ու զարգացմանը:

Մեծ է գրականության, մասնավորապես բանահյուսության դերը անձի բարոյական արժեքների, գեղարվեստական ճաշակի, աշխարհընկալման ձևավորման հարցում:

Հայրենասիրական բովանդակությամբ ստեղծագործությունների վերլուծությունը զարգացնում է սովորողի մտածողությունը, դատողություններ, եզրահանգումներ կատարելու կարողությունը՝ նպաստելով նրանց հայրենասիրական դաստիարակությանը:

Այս ուսումնասիրության նպատակն է պատասխանել այն հարցին, թե ինչպե՞ս կարող է էպոսը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման միջոց լինել:

Նշված նպատակից բխում են հետևյալ հիմնախնդիրները՝

1) բնութագրել արժեհամակարգը:
2) ուսումնասիրել հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները
3) ներկայացնել էպոսը՝ որպես դաստիարակության միջոց
4) ի հայտ բերել այն հմտությունները, որոնք սովորողները ձեռք են բերում՝ էպոսն ընթերցելով

## 1.Արժեք և արժեհամակարգ

Խոսելով սովորողների կրթության մասին՝ հաճախ ենք օգտագործում «արժեքներ» հասկացությունը, որովհետև կարևորում ենք արժեհամակարգի ձևավորումը սերնդի կրթության և դաստիարակության գործում:

Իսկ ի՞նչ են **արժեքն** ու **արժեհամակարգը**:

**Արժեքն** այն երևույթն է, որն իմաստավորում է մեր կյանքը:

Արժեքների պահպանմանը նպաստում է բարոյականությունը: Եթե փլուզվում են արժեքները, տարածվում է անբարոյականությունը: Քայքայվում է տնտեսությունը, շատանում են հանցագործությունները, մարդիկ դժբախտանում են, սկսում են իրար կոտորել: Այս պատճառով էլ կրթության գլխավոր իմաստը պիտի լինի արժեհամակարգի ձևավորումը:

Դպրոցը պիտի լինի այն միջավայրը, որտեղ հաստատվում են էթիկական նորմերը, իսկ աշակերտները սովորում են դրանց համապատասխանել՝ ապրելով և՛ ցավ, և՛ ուրախություն, և՛ հաղթանակի բերկրանք և՛ դժվարություններ հաղթահարելու կամք:

Արժեքներն են՝

1. առողջությունը
2. սերը, ընտանիքը, տունը
3. մտերիմ ընկերները, նրանց հետ շփումը
4. աշխատանքը
5. նյութական բարեկեցությունը
6. կրոնը

7. հետաքրքրություններն ու ժամանցը
8. ստեղծագործելը
9. ինքնակրթությունը
10. դիրքը հասարակության մեջ
11. ազատությունը
12. կայունությունը

**Արժեհամակարգի** ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժության մեջ ընկալվում է իբրև մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային արժեքների, գրական նվաճումների համար հպարտության զգացում:

Դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է.

- լինի հայրենասեր և պատրաստ՝ հայրենիքին ծառայելու
- ունենա ազգային ինքնագիտակցություն
- ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում
- գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը

## 2. Հայրենիք և հայրենասիրություն

**Հայրենիքն** այն երկիրն է, որտեղ մարդ ծնվել է ու որի քաղաքացին է: Պատմականորեն տվյալ ժողովրդին պատկանող բնատարածքը՝ իր բնությամբ, բնակչությամբ, հասարակական և պետական կառուցվածքով, լեզվով, մշակույթով, կենցաղով, բարքերով:

**Հայրենասիրությունը** բարոյական և սոցիալական զգացմունք է, որի բովանդակությունն են կազմում որոշակի էթնիկական հավաքականությանը պատկանելու գիտակցումը, զգացումը դեպի այդ հավաքականությունը, նրա զբաղեցրած պատմական տերիտորիան և ստեղծած արժեքների համակարգը, դեպի համամարդկայինն ու համազգայինը:

Արժեքների մեջ մեծագույնը հայրենասիրությունն է: Ուստի երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը ներկայիս հրատապ խնդիրներից մեկն է:

Հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի սիրո զգացումով իր ընտանիքի, շրջապատի, հարազատ բնակավայրի, երկրի հանդեպ:

Հայրենասիրական դաստիարակությունը պետք է իրականացվի անընդհատ, դասարանում, գործողություններում, խաղերում: Այս գործում կարևոր դերակատարում ունեն թանգարանները, մշակութային հուշարձանները, դպրոցական ծրագրով նախատեսված կրթական միջոցառումները:

### 3. Էպոսը՝ որպես ազգային արժեքների ձևավորման միջոց

Արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար անչափ կարևոր է ազգային մտածողություն և հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից է սովորողների մեջ ազգային, բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումը ու զարգացումը: Այն արժեքների, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից:

Այս գործում մեծ դերակատարություն ունի ժողովրդական բանահյուսությունը, որը կարող է երիտասարդ սերնդի ազգային ինքնության և բարոյական դաստիարակության գործընթացը դարձնել առավել արդյունավետ:

Ժողովրդական բանահյուսության մեջ արտացոլված են մեր ժողովրդի աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարները, երազանքները: Այստեղ արտացոլված է մեր ազգի անդրդվելի կամքը, զորությունն ու հնարավորությունները՝ ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

**Էպոսը** (դյուցազներգություն) ժողովրդական բանահյուսության տեսակ է: Դա մի ուղի է, որը մեզ տանում է դեպի ինքնաճանաչում: Այսինքն՝ էպոսը բացահայտում է մեր ինքնությունը: Էպոսում խտացված են մեր ժողովրդի արժեքները,

պատկերացումները առաքինության, ազնվության, լավի ու վատի, արդարադատության, անկեղծության ու հավատարմության մասին: Այստեղ ամփոփված են ժողովրդի ձգտումը դեպի ազատությունը, պայքարը արդարության համար:

**Էպոսի մասին մեր մեծերն ասել են.**

Ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ:

…Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի առաջ:

Հովհ. Թումանյան

«Սասունցի Դավիթ» էպոսում չորս սերնդի պատկանող հերոսները, միմյանց լրացնելով, արտացոլել են իրենց կերպարներն ստեղծող ժողովրդի պատկերացումները, նրա լավագույն երազանքներն ու ակնկալությունները:

Այդ կերպարների մեջ ժողովուրդը մարմնավորել է նաև այն մարդկանց ընդհանուր հայացքները, ովքեր պատերազմ չեն հրահրում, բայց ստիպված են կռվել, ովքեր չեն ուզում հեղել ո՛չ իրենց, ո՛չ էլ այլոց արյունը: Այդ հայացքները խարսխված են այն դարավոր փորձի վրա, որ ժողովուրդը ձեռք է բերել կործանարար պատերազմների, ասպատակությունների, արյունահեղ կոտորածների, օտար նվաճողների և սեփական թագավորների լծի ներքո կրած տառապանքների բովում:

Հ. Օրբելի

Հայ գրականությունը, պատկերելով հայ ժողովրդի բուռն ատելությունը և արյունոտ պայքարը նրան ճնշող բռնակալների դեմ, եղել է նաև նրա դաստիարակը դարերի ընթացքում: Նա փրկել է հայ ժողովրդին այլասերումից և ապազգայնացումից: Նա տվել է հայ ժողովրդին հումանիզմի և դեմոկրատիայի գաղափարներ, ժողովրդասիրության և համաշխարհային եղբայրության իդեալներ, լավագույն, արդար և ազատ աշխարհ ստեղծելու հույս և հավատ, և այն կենսագործելու պատրաստակամ զոհաբերություն...

Այդ էպոսը մեր նվիրական ավանդությունների հին գանձարանն է և դառն ու դաժան ժամանակների մեր վեհ ներշնչանքը, մեր պատգամաբերը:

Դյուցազն Դավիթի մեջ լրիվ կերպով շոշափվում է հայ ժողովուրդը:

Դավիթը հայրենասեր է, ժողովրդասեր է, ռազմիկի և աշխատավորների պաշտպան, անձնուրաց քաջ է, մարդասեր և խաղաղասեր…

Ավ. Իսահակյան

Էպոսի հերոսների ուժն ու քաջությունը, ողջ էությունը երևում է նրանց գործողությունների, սխրանքների միջոցով: Նրանք իրենց ուժն ու զորությունը ստանում են մայր բնությունից, հայրենի հողից և ջրից:

Հայրենի Կաթնաղբյուրի ծնունդ են Սանասարն ու Բաղդասարը: Այս առասպելական հերոսները օժտված են մարդկային բարձր հատկանիշներով և նույնիսկ թուլություններով: Նրանց բնորոշ է պարզամտությունը, համառությունը, պատվասիրությունը, մարդասիրությունն ու ազատասիրությունը: Իրենց քաղաք-ամրոցը կառուցելուց առաջ նրանք տներ են կառուցում աղքատ մարդկանց համար:

Մեծ Մհերն այնքան պարզամիտ է, որ հարցնում է, թե առյուծը «հեռվա՞նց կուտի, թե՞ մոտենաս ու նոր կուտի»: Միամիտ լինելով հանդերձ՝ նա անմիտ ու անգետ չէ: Հոգ է տանում իր ժողովրդի մասին , պաշտպանում է իր երկիրը, հավատարիմ է իր երդմանը:

Սասնա հերոսները նաև վեհանձն են, շիտակ, նրանց խորթ են նենգությունն ու խորամանկությունը:

Բոլոր քաջերին բնորոշ է անձնազոհությունը: Նրանք պատրաստ են մեռնել իրենց հողի, ծնողի և ժողովրդի համար: Ծովինարը զոհաբերում է իրեն հանուն իր ժողովրդի փրկության՝ ամուսնանալով Բաղդադի խալիֆի հետ: Մհերն ու Արմաղանը Սասնա ճրագը վառ պահելու համար ծնում են Դավթին՝ իմանալով, որ նրա ծնվելուն պես իրենք պիտի մեռնեն:

Սասնա հերոսները որքան էլ ատում են բռնությունն ու ստրկությունը, որքան էլ ցասումով կռվում են թշնամիների դեմ, բայց ամենևին էլ դաժան ու անհոգի չէին: Նրանք օժտված են զգայուն սրտով, ջերմ ու խոր զգացմունքներով: Փոքր Մհերը, լսելով ծնողների մահվան մասին, երեք օր արցունքի հեղեղ է թափում:

Էպոսի կին հերոսներն էլ աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ, խոհեմությամբ, զգայուն են, պարկեշտ և միշտ պատրաստ՝ զոհելու իրենց կյանքը հայրենիքի, ընտանիքի ու զավակների համար:

Ժողովրդի համար զենքով հայրենիքի պաշտպանության օրը ավելի լավ է մյուս բոլոր օրերից: Սակայն ժողովուրդը ժողովուրդ է ամենից առաջ իր խաղաղ, քրտնաջան աշխատանքով: Հիշարժան է հայ հողագործի իմաստուն խոսքը. «Աշխարհը գութանի մոտ կլիանա»: Սա լավագույն ձևով է արտահայտում հայ ժողովրդի բնավորությունն ու մտածողությունը և մեր էպոսի գլխավոր գաղափարախոսական հիմքն է:

## Ուսուցման մեթոդներ

«Սասունցի Դավիթ» թեմայի ամփոփում դասի ժամանակ կարելի է կիրառել հետևյալ մեթոդները

- սովորողների հետաքրքրությունն ու ակտիվությունն ապահովելու նպատակով կիրառել «Պրիզմա» :



- Հերոսների համեմատական բնութագիրը տալու համար օգտագործել Վենի դիագրամը




- Եզրահանգում և դատողություն անելու նպատակով լրացնել հետազոտման աղյուսակ

| | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 1 | Ի՞նչ է էպոսը | |
| 2 | Ովքե՞ր են էպոսի հերոսները | |
| 3 | Ինչպիսի՞ն են կանայք | |
| 4 | Հայ ժողովրդի ի՞նչ նոր որակներ | |

| | | |
|---|---|---|
| | բացահայտեցիք | |
| 5 | Ի՞նչ սովորեցիք էպոսից | |
| 6 | Ու՞մ կուզեիք նմանվել և ինչո՞ւ | |

## Եզրակացություն

Այսպիսով՝ էպոսը հնարավորություն է տալիս հասկանալու՝ ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ւր ենք գնում։

Նա նպաստում է սովորողների հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորմանը։

Բարոյական, գեղագիտական, ստեղծագործական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ սովորողները

- մտածեն ընթերցած ստեղծագործության գաղափարական բովանդակության շուրջ.
- կարողանան վերլուծել և դատողություններ անել.
- ապրումակցել հերոսներին.
- գնահատեն նրանց արարքները
- համեմատեն իրենց և հերոսներին.
- ձգտեն կատարել բարոյական նորմերին համապատասխան գործեր

Հետազոտությունը ցույց տվեց, որ սովորողները կարդալով, վերլուծելով էպոսը, կտոգորվեն հայրենասիրությամբ, կճանաչեն մեր պատմությունը, մշակույթի գանձերը և կգիտակցեն, որ իրենք են այդ ամենի ժառանգորդը, պահապանն ու սերնդեսերունդ փոխանցողը։

## Գրականության ցանկ

1. Սասունցի Դավիթ (Հայկական ժողովրդական էպոս), Եր. «Արևիկ» 1990

2. Հ. Բախչինյան, Ս. Սարինյան, Հ. Թամրազյան

Հայ գրականություն 9, Եր. «Լույս» 2005

3. Գ. Օհանյան Հայ գրականության քրիստոմատիա 9-րդ դասարան, Եր. 2007

4. Հայկական սովետական հանրագիտարան հ. 2,6 Եր. 1976, Եր. 1980

5. Ա. Գևորգյան «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում» Եր. 2002